



ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԸ,  
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔԸ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ  
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,  
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ  
ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՒՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ  
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ  
ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻՍԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՄԻՐՈՅ ՈՂԶՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՎՐԱՅ ԳՈՐԾՈՂ ԹԵՄԱԿԱԼ  
ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ,  
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀՈԳԵԻՈՐ ՀՈՎԻՒՆԵՐԻՆ ՈՒ  
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ՎԱՆՕՐԷԻՑ  
ՎԱՆԱՀԱՅՐԵՐԻՆ, ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԵՒ ՏԻԿՆԱՆՑ  
ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՄԻՐԵՑԵԱԼ ՀԱԻԱՏԱՑԵԱԼ՝  
ԺՈՂՈՎՐԴԻՆ

Կամօքն Աստուծոյ, Հայաստանի ինքնիշխան հանրապետութեան հըռ-  
չակումով, բացուեցին յուսոյ դռները նաև Ամենայն Հայոց Առաքելական  
Սուրբ Եկեղեցու առաջ, որ ահա հազար և եօթը հարիւր տարիներ շարու-  
նակ եղել է քրիստոնէական հաւատի վէմը և մայր դաստիարակը մեր աստ-  
ուածասէր ժողովրդի:

Հայ ազգի պատմութիւնը և Հայաստանեայց Եկեղեցոյ պատմութիւնը  
մեծ չափով ընթացել են մէկը միւսով իմաստաւորուած, մէկը միւսով զօրա-  
ցած, մէկը միւսին մարտակից՝ մի ժողովուրդ, մի պետութիւն, մի ազգային  
Եկեղեցի նշանաբանով:

Մեր օրերին այս նշմարտութիւնը առաւել պայծառացաւ անցեալ տար-  
ւոյ Օգոստոսեան Պատմական Հոշակագրով:

Հայ Առաքելական Եկեղեցին դարերի ընթացքում ղեկավարվել է եկեղեցահաստատ կանոններով, աանդութիւններով ու ժողովական որոշումներով, սերտ գործակցութեամբը հոգևորականաց դասի և ժողովրդի ներկայացուցիչների, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնութեան ներքոյ:

Այժմ հասած է ժամանակը, որ մեր Սուրբ Եկեղեցին ունենայ իր նոր խմբագրուած կանոնագրութիւնը՝ հիմնուած աանդական կարգ ու կանոնի վրայ, արդի պայմաններում գործադրելի մեր հայրենիքում: Նման կանոնագրութիւն հնարատր չեղաւ ունենալ վերջին տասնամեակներին, խորհրդային կարգերի տնօրինած ծանօթ սահմանափակումների պատճառաւ:

Այժմ, սակայն, մեր հայրենի նորահռչակ հանրապետութեան ազատ պայմաններում, հնչած է ժամը, որ մեր Մայր Եկեղեցին իր ներքին կեանքի ու գործունէութեան գրատր կանոնագրութիւնը կազմէ ու իրագործէ արդի բարեբաստիկ պայմանների մէջ:

Այսպէս է, որ Մայր Աթոռիս նախաձեռնութեամբ խմբագրուեց կանոնագրութեան մի նախագիծ, որ քննարկուեց Գերագոյն Հոգևոր Խորհրդի և Եպիսկոպոսաց ժողովի խառն նիստերում: Սոյն թուի 14 Փետրուարի լիագումար նիստում միաձայնութեամբ քուէարկուեց Եպիսկոպոսաց ժողովի յատուկ յանձնաժողովի կողմից բարեփոխուած այդ նախագիծը, որը հաստատուեց Մեր հայրապետական վճիռով:

Այսու Մեր կոնդակա հրահանգում ենք, որ՝ «Հայաստանի Հանրապետութեան և Խորհրդային Միութեան տարածքի վրայ գործող Հայաստանեայց Եկեղեցու նորահաստատ կանոնագրութիւնը», բաղկացած 94 յօդուածներից, գործադրութեան մէջ մտնի Հայաստանի և ներքին սփիւոքի հայ եկեղեցական համայնքներում, թեմերում և վանական հաստատութիւններում, համաձայն սոյն կանոնագրութեան նախատեսումների:

Նորակազմ այս կանոնագրութեան գործադրութիւնը հանդիսանում է մի նոր հանգրուան մեր բազմադարեան Եկեղեցու պատմութեան ճանապարհին:

Բերկրեալ սրտով ողջունում ենք և օրհնում այս պատմական փաստաթուղթը, որ կոչուած է եկեղեցաշէն նոր ծրագրեր իրագործելու, յառաել կազմակերպեալ շինութիւն մեր հաատատր ժողովրդի հոգևոր կեանքի:

«Այսուհետև, եղբարք իմ սիրելիք, հաստատուն եղերուք, անշարժ կացեք, առաել լերուք ի գործ Տեառն յամենայն ժամ. գիտասցիք զի վաստակքն ձեր ոչ են ընդունայն առաջի Տեառն» (Ա. Կորնթ. ԺԵ. 58):

«Զի թէպէտ և մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ. խնդամ, իբրև տեսանեմ զկարգն ձեր և զհաստատութիւն հաատոցն ձերով որ ի Քրիստոս Յիսուս» (Կողոս. Բ. 5). ամէն:

*Պապ Գեորգ*

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակա 1-2 Մարտի  
1991 Փրկչական ամի,  
և ի տումարիս Հայոց ՌԵՆԽ  
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի: